Օրինակելի ձեւ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

_____	_____
(պետական ոչ առեւտրային կազմակերպության անվանումը)	(լիազորված մարմնի անվանումը)
_____-ի տնօրեն	_____-ի ղեկավար
…..……	…..……
(Ա. Ա. Հ.)	(Ա. Ա. Հ.)
……..……	……..……
(ստորագրություն)	(ստորագրություն)
«…» «…….» 20 .. թ.	«…» «…….» 20 .. թ.
Կ.Տ.	Կ.Տ.

_____

(տարածաշրջանային խոշոր կենտրոնի անվանումը)

_____ _____

պետական ոչ առեւտրային կազմակերպության

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏԾՐԱԳԻՐ

(ԲԻԶՆԵՍ-ՊԼԱՆ)

(Օրինակելի ձեւ)

20 … - 20 .. ժամանակահատվածի

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Տարածաշրջանային պետական քոլեջի լրիվ անվանումը՝

_____

պետական ոչ առեւտրային կազմակերպություն

2. Փոստային հասցեն՝

_____

3. Լիազորված մարմնի անվանումը՝

_____

4. Պետական ոչ առեւտրային կազմակերպության հարկային
հաշվառման համարը՝

5. Պետական ոչ առեւտրային կազմակերպությանը սպասարկող բանկի անվանումը՝

_____

6. Պետական ոչ առեւտրային կազմակերպության բանկային
հաշվի համարը՝

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Տարածաշրջանային պետական քոլեջը մինչև 20… թվականը կապահովի և կշարունակի իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում որակյալ կրթության մատուցումը շահագրգիռ կողմերին՝ ապահովելով կրթության որակի արտաքին և ներքին գնահատման չափանիշները՝ որակի կառավարման ներքին համակարգի ձևավորման և մասնագիտական կրթության որակի ապահովման համար սահմանված չափորոշիչների պահանջները կատարելու միջոցով:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Տարածաշրջանային պետական քոլեջը՝

- ապահովում է որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան
- ապահովում է կրթական ծառայությունների ճկունությունը աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ,
- նպաստում է անհատի ինքնության գիտակցմանը և արժևորմանը,
- ապահովում է կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճ,
- զարգացնում է տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՆՊԱՏԱԿԸ

Քոլեջի նպատակն է կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ավանդական, ինչպես նաև նպատակային փորձարարական և նորարարական ծրագրերի իրականացման ու տարբեր կազմակերպությունների, այդ թվում ուսումնական հաստատությունների ընդգրկմամբ ստեղծված ցանցային համակարգի ձևավորման շնորհիվ դառնալ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի զարգացման գերազանցության և տարածաշրջանային բազմազործառութային կենտրոն՝ ստանձնելով կրթական բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը՝ աշխատաշուկայի պահանջներին և անձի պահանջմունքներին համապատասխան:

ԲԱԺԻՆ 1.
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳԻՐԸ

Սույն բաժնի 1.1-ից 1.12 կետերում ներկայացվում է առաջիկա առնվազն երեք ֆինանսական տարվա համար (այսուհետ՝ միջնաժամկետ հատված) պետական ոչ առեւտրային կազմակերպության (այսուհետ՝ պետական կազմակերպություն) գործունեությանը վերաբերվող ռազմավարական բնույթի տեղեկատվություն (կանխատեսումներ): Ընդ որում, սույն բաժնով պահանջվող տեղեկատվությունը բովանդակում է Տարածաշրջանային պետական քոլեջի գործունեության միջնաժամկետ ծրագրին ներկայացվող պարտադիր պահանջները, սակայն պետական կազմակերպություններն, ըստ հայեցողության, կարող են, ի լրումն վերոհիշյալ տեղեկատվության, իրենց գործունեության ծրագրերում ներառել նաեւ Տարածաշրջանային պետական քոլեջի գործունեությանը վերաբերվող ցանկացած այլ տեղեկատվություն եւ մանրամասներ:

1.1 Տարածաշրջանային պետական քոլեջի գործառույթների բնույթը և շրջանակները

Տարածաշրջանային պետական քոլեջի գործառույթների շրջանակները

Ներկայացվում են պետական կազմակեպության գործառույթների շրջանակները, ինչպես նաեւ տեղեկատվություն պետական կազմակեպության գործառույթների հետ կապված ցանկացած սահմանափակումների (ներառյալ օրենսդրական բնույթի) վերաբերյալ:

Տարածաշրջանային պետական քոլեջի կողմից մատուցվող ծառայությունները

Ներկայացվում են պետական կազմակեպության կողմից մատուցվող ծառայությունները՝ հնարավորինս խմբավորված տեսքով: Պետական կազմակեպության կողմից մատուցվող ծառայությունների ցանկում առանձնացված ձեւով ներկայացվում են այն ծառայությունները, որոնց գծով ծախսերը գերազանցում են պետական կազմակեպության ընթացիկ ծախսերի 10 տոկոսը:

Այն պետական կազմակեպությունները, որոնք չեն մատուցում նման ծառայություններ, պետք է ներկայացնեն մատուցվող առավել խոշոր 10 ծառայությունները (ծառայությունների խմբերը): Ծառայությունների յուրաքանչյուր խմբի գծով նկարագրվում են նաեւ այդ ծառայությունների գծով շահառուների շրջանակը:

Ծառայությունների շրջանակի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփ ձեւով ներկայացվում է սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.1-ի տեսքով:

Տարածաշրջանային պետական քոլեջի դերը տվյալ ոլորտում

Եթե պետական կազմակեպության գործունեության ոլորտում առկա են տվյալ կամ մրցակից այլ ծառայություններ մատուցող այլ կազմակեպություններ, ապա ներկայացվում են տվյալ ծառայությունների մատուցման ոլորտում պետական կազմակեպության գրաված հատվածը, ինչպես նաեւ պետական կազմակեպության հարաբերական առավելությունները մրցակիցների համեմատ (որակ, ծավալ, շահառուների շրջանակ եւ այլն):

Ներկայացվում է պետական կազմակեպության կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաեւ այդ ծառայությունների գնագոյացման մեխանիզմների ընդհանուր վերլուծությունը:

1.2 Տարածաշրջանային պետական քոլեջի_միջնաժամկետ նպատակները

Նկարագրվում են այն առանձնահատուկ նպատակները, որոնց պետական կազմակեպությունը նախատեսում է հասնել միջնաժամկետ հատվածում:
Պետական կազմակեպության նպատակների ձեւակերպումը պետք է լինի հստակ եւ հնարավորինս հակիրճ: Նպատակները պետք է բխեն պետական կազմակեպության կանոնադրական պահանջներից եւ լինեն շարունակական ու կայուն՝ առնվազն պետական կազմակեպության գործունեության ծրագրի ընդգրկման միջնաժամկետ հատվածում:
Նպատակները պետք է սահմանվեն այնպես, որպեսզի դրանց իրագործման արդյունքում հնարավոր լինի ծածկել սույն օրինակելի ձեւի 1.1 կետում բացահայտված ծառայությունների եւ շահառուների շրջանակները:
Պետական կազմակեպության նպատակները եւ դրանց իրագործմանը նպաստող ծառայությունների նկարագիրը ամփոփ ձեւով ներկայացվում են սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.1-ի տեսքով:

1.3 Տարածաշրջանային պետական քոլեջի_հիմնական արդյունքային (կատարողական) չափորոշիչները

Ներկայացվում են միջնաժամկետ հատվածում պետական կազմակեպության հիմնական ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշները եւ այն չափորոշիչները որոնցով գնահատվում է պետական կազմակեպության կատարողականը:

<u>Ծառայությունների գծով արդյունքային ցուցանիշները</u>
Ներկայացվում են պետական կազմակեպության կողմից մատուցվող ծառայությունների գծով արդյունքային (ոչ ֆինանսական) ցուցանիշները: Վերջիններս պետք է ներառեն պետական կազմակեպության կողմից միջնաժամկետ հատվածում հասանելի հիմնական արդյուքները՝ մատուցվող հիմնական ծառայությունների քանակը, որակը ժամկետայնությունը եւ միավորի գինը: Այդ ցուցանիշների ձեւավորման համար պետք է հիմք ծառայեն պետական կազմակեպության բյուջետային պատվերի համաձայնագրերը:
Միջնաժամկետ հատվածում ծառայությունների գծով պետական կազմակեպության արդյունքային (ոչ ֆինանսական) ցուցանիշների կանխատեսումներն ամփոփ ձեւով ներկայացվում են սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.2 –ի տեսքով:

<u>Շահառուների բավարարվածության աստիճանը նկարագրող ցուցանիշները</u>
Ներկայացվում են պետական կազմակեպության ծառայություններից օգտվող շահառուների՝ այդ ծառայությունների մատուցման գծով բավարարվածության աստիճանը նկարագրող ցուցանիշները: Վերջիններս պետք նկարագրեն շահառուների տեսակետը ծառայության կոնկրետ առանձնահատկությունների վերաբերյալ, նրանց սպասումները ծառայություններից եւ կարծիքը մատուցված ծառայությունների վերաբերյալ:
Շահառուների բավարարվածության աստիճանը նկարագրող ցուցանիշները ներկայացնում են միայն այն պետական կազմակեպությունները, որոնց տարեկան

եկամուտները միջնաժամկետ հատվածում գերազանցում են (գերազանցելու են) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 5 տոկոսը:

1.4 Տարածաշրջանային պետական քոլեջի_կարողությունների զարգացման ծրագիրը

Ներկայացվում է միջնաժամկետ հատվածում պետական կազմակեպության կողմից իր կարողությունների կառավարման ծրագիրը:
Պետական կազմակեպության կարողությունները պետք է ներառեն այն ռեսուրսները (մարդկային ռեսուրսներ եւ ֆիզիկական կարողություններ), որոնք մատչելի են պետական կազմակեպությանը՝ առաջադրված արդյունքներին առավել արդյունավետ կերպով հասնելու համար:
Պետական կազմակեպության կարողությունների զարգացման ծարագիրը պետք է փոխկապակցվի պետական կազմակեպության կողմից մատուցվող կոնկրետ ծառայությունների հետ եւ ամփոփվի սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.2 –ի տեսքով:
Պետական կազմակեպության կողմից պահանջվող ցանկացած լրացուցիչ կարողություն պետք է հիմնավորվի ծառայությունների արդյունքային ցուցանիշների փոփոխությամբ (օրինակ՝ քանակի կամ որակի աճ) կամ ծախսային արդյունավետության աճով (օրինակ՝ ծառայության միավորի գնի նվազեցում): Ընդ որում, պետք է բացահայտվեն, թե նախատեսվող լրացուցիչ կարողությունների աղբյուրները (շահույթի օգտագործում, հիմնադրի կողմից կատարվողներդրումեր, այլ աղբյուրներ): Նշված աղբյուրներից յուրքանչյուրը պետք է ներկայացվի եւ վերլուծվի առանձին:

1.5 Տարածաշրջանային պետական քոլեջի_շահույթի ձեւավորման եւ օգտագործման քաղաքականությունը

<u>Պետական կազմակեպության շահույթի ձեւավորման նպատակային ցուցանիշները</u>
Ներկայացվում է տեղեկատվություն միջնաժամկետ հատվածում պետական կազմակեպության շահույթի ձեւավորման նպատակային ցուցանիշների վերաբերյալ:
Տեղեկատվությունը ամփոփվում եւ ներկայացվում է դինամիկ շարքի տեսքով՝ սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.3 –ի տեսքով:
Միջնաժամկետ հատվածում պետական կազմակեպության շահութաբերության մակարդակի նավազեցում նախատեսելու դեպքում, ներկայացվում են համապատասխան պարզաբանումները:

<u>Տարածաշրջանային պետական քոլեջի շահույթի օգտագործման քաղաքականությունը</u>
Ներկայացվում է պետական կազմակեպության շահույթի օգտագործման քաղաքականությունը միջնաժամկետ հատվածում: Ձեւավորված շահույթը պետական կազմակեպության կանոնադրական խնդիրների իրականացմանն ուղղելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել լրացուցիչ ներդրումների արդյունքում պետական կազմակեպության կարողությունների փոփոխությունները:
Ներկայացվում է նաեւ տեղեկատվություն պետական կազմակեպության շահույթի ձեւավորման եւ օգտագործման հետ կապված օրենսդրական կամ այլ բնույթի սահմանափակումների վերաբերյալ:

Միջնաժամկետ հատվածում պետական կազմակեպության շահույթի օգտագործման ծրագիրը ամփոփ ձեւով ներկայացվում էսույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.4 –ի տեսքով:

1.6 Տարածաշրջանային պետական քոլեջի_գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշները

Ներկայացվում են պետական կազմակեպության հիմնական ֆինանսական ցուցանիշների գծով միջնաժամկետ կանխատեսումները: Կանխատեսումները ներկայացվում են ագրեգացված մակարդակով՝ սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.3–ի տեսքով:

1.7 Տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման, ներքին հսկողության եւ վարձատրության քաղաքականությունը

Տարածաշրջանային պետական քոլեջի ներքին կառավարման եւ հսկողության համակարգերում նախատեսվող փոփոխությունները

Ներկայացվում են պետական կազմակեպության ներքին կառավարման եւ հսկողության համակարգերում նախատեսվող փոփոխությունները միջինժամկետ հատվածում:

Ներկայացված ցանկացած փոփոխություն պետք է հիմնավորվի պետական կազմակեպության գործունեության արդյունավետության վրա վերջինիս ազդեցությամբ կամ օրենսդրական պահանջներով:

Ներկայացվում է նաեւ տեղեկատվություն պետական կազմակեպության խորհրդի անդամների թվաքանակի (դրա փոփոխությունների) վերաբերյալ:

Տարածաշրջանային պետական քոլեջի աշխատողների վարձատրության քաղաքականությունը

Ներկայացվում է պետական կազմակեպության քաղաքականությունը աշխատողների վարձատրության ոլորտում: Մասնավորապես, ներկայացվում են պետական կազմակեպության վարչակառավարչական անձնակազմի, մասնագետների եւ այլ աշխատողների միջին ցուցակային թվաքանակը եւ միջին աշխատավարձի դինամիկան միջնաժամկետ հատվածում:

Վարձատրության աճ կամ նվազեցում նախատեսելու դեպքում, անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորումները եւ ազդեցությունը պետական կազմակեպության կարողությունների վրա:

Ներկայացվում է տեղեկատվություն պետական կազմակեպության ղեկավար աշխատողների վարձատրության քաղաքականության հետ կապված օրանսդրական կամ այլ բնույթի սահմանափակումների վերաբերյալ:

Պետական կազմակեպության վարձատրության քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվում է սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.5–ի տեսքով:

1.8 Տարածաշրջանային պետական քոլեջի պարտավորությունների եւ խոշոր ապառքների կառավարումը

Տարածաշրջանային պետական քոլեջի ապառքները եւ կրեդիտորական/դեբիտորական պարտքերը

Ներկայացվում է տեղեկատվություն պետական կազմակեպության ապառքների եւ կրեդիտորական/դեբիտորական պարտքերի վերաբերյալ, ինչպես նաեւ պետական կազմակեպության ապառքների նվազեցմանը կամ մարմանն ուղղված միջնաժամկետ քաղաքականությունը:

Ապառքների (ժամկետանց պարտավորությունների) ընդհանուր մեծությունից բացի անհրաժեշտ է բացահայտել դրանցից առավել խոշորները եւ վերջիններիս ազդեցությունը պետական կազմակեպության ֆինանսական դիրքի վրա:

Պետական կազմակեպության այն ապառքները, որոնց ժամկետայնությունը գերազանցում է 30 օրը, պետք է ներկայացվեն առանձնացված ձեւով:

Ապառքների գոյացման աղբյուրները ներկայացնելիս պետական եւ համայնքային բյուջեների գծով ապառքները ներկայացվում են առնձնացված ձեւով:

Միջնաժամկետ հատվածում ապառքների մակարդակի աճ կանխատեսելու դեպքում ներկայացվում են համապատասխան բացատրություններ եւ տեղեկատվություն այդ ապառքները նվազեցնելու ուղղությամբ պետական կազմակեպության կողմից իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ:

Ներկայացվում է տեղեկատվություն պետական կազմակեպության ապառքների մեծության հետ կապված օրանդրական կամ այլ բնույթի սահմանափակումների վերաբերյալ:

Պետական կազմակեպության ապառքների վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփվում է սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.6–ի տեսքով:

Պետական կազմակեպության կրեդիտորական եւ դեբիտորական պարտքերի մեծության ընդհանուր ցուցանիշներից բացի ներկայացվում են նաեւ վերջիններիս գոյացման հիմնական աղբյուրները՝ սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.7–ի տեսքով:

Տարածաշրջանային պետական քոլեջի պարտքերը եւ դրանց կառավարման քաղաքականությունը

Ներկայացվում է տեղեկատվություն պետական կազմակեպության պարտքերի վերաբերյալ (ստացված եւ տրամադրված): Մասնավորապես, անհրաժեշտ է բացահայտել պարտքի ֆինանսավորման հիմնական աղբյուրները, ժամկետայնությունը, արժույթը, տոկոսադրույքը եւ դրա հետ կապված ռիսկերի կառավարման քաղաքականությունը:

1.9 Տարածաշրջանային պետական քոլեջի ներդրումային քաղաքականությունը

Տարածաշրջանային պետական քոլեջի երկարաժամկետ ներդրումային քաղաքականությունը:

Ներկայացվում է պետական կազմակեպության երկարաժամկետ ներդրումային քաղաքականությունը՝ այն կապակցելով պետական կազմակեպության կապիտալ ծախսերի քաղաքականության հետ: Այդ նպատակով սույն օրինակելի ձեւի հավելված

1.1-ի աղյուսակ N 1.8–ում ներկայացվում են միջնաժամկետ հատվածում պետական կազմակեպության կապիտալ միջոցառումների վերաբերյալ կանխատեսումները:
Անհրաժեշտ է նկարագրել պետական կազմակեպության կողմից ծրագրավորվող կապտալ միջոցառումներից յուրաքանչյուրի նպատակը, ինչպես նաեւ ազդեցությունը պետական կազմակեպության կողմից մատուցվող ծառայությունների մակարդակի եւ կարողությունների վրա:
Անհարժեշտ է բացահայտել նաեւ կապիտալ ներդրումների աղբյուրները, ընդ որում, պետական եւ համայնքային բյուջետային ռեսուրսների հաշվին նախատեսվող ներդրումներն անհրաժեշտ է ներկայացնել առանձնացված ձեւով:
Յուրաքանչյուր կապիտալ միջոցառման գծով ներկայացվում են հղումներ այդ ծախսերի իրականացման լիազորությունների հետ կապված օրենսդրական, հիմնադիր կամ այլ կանոնակարգիչ փաստաթղթերինա, ինչպես նաեւ ներկայացվում է տեղեկատվություն պետական կազմակեպության կապիտալ ծախսերի ուղղությունների, մեծության եւ դրանց ֆինանսավորման աղբյուրների հետ կապված օրանսդրական կամ այլ բնույթի սահմանափակումների վերաբերյալ:

Տարածաշրջանային պետական քոլեջի կաճաժամկետ ներդրումային քաղաքականությունը

Ներկայացվում է պետական կազմակեպության կաճաժամկետ ներդրումային քաղաքականությունը, որը վերաբերում է պետական կազմակեպության ազատ դրամական միջոցների օգտագործման ծրագրերին: Այդ նպատակով անհրաժեշտ է բացահայտել պետական կազմակեպության ներդրումների մեծությունը, դրանց ուղղությունները, միջին եկամտաբերությունը եւ ժամկետները:
Ներկայացվում է տեղեկատվություն պետական կազմակեպության ազատ դրամական միջոցների օգտագործման եւ կարճաժամկետ ներդրումների հետ կապված օրանսդրական կամ այլ բնույթի սահմանափակումների վերաբերյալ:

1.10 Տարածաշրջանային պետական քոլեջին ամրացված ակտիվների օգտագործման քաղաքականությունը

Ներկայացվում է պետական կազմակեպությանն ամրացված ակտիվների օգտագործման գծով պետական կազմակեպության միջնաժամկետ քաղաքականությունը: Անհրաժեշտ է բացահայտել պետական կազմակեպությանն ամրացված հողամասերի եւ շենք-շինությունների մակերեսները, դրանք՝ վարձակալության հանձնելու կամ այլ կերպ օգտագործելու հետ կապված՝ քաղաքականությունը, ինչպես նաեւ դրա ազդեցությունը պետական կազմակեպության կարողությունների վրա:
Պետական կազմակեպությանն ամրացված ակտիվների օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվում է սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.9–ի տեսքով:

1.11 Պետության անունից ապագային վերաբերող չլիազորված պարտավորությունների ընդունման (ֆորվարդային պարտավորություններ) հետ կապված խնդիրներ

Ներկայացվում է տեղեկատվություն պետական կազմակեպության կողմից ընդունվող այն երկարաժամկետ պարատվորությունների վերաբերյալ, որոնք իրականացվում են

կամ պետք է իրականացվեն պետության անունից: Նման պարտավորություններ են, օրինակ, պետական կազմակեպության սեփականությունը հանդիսացող ակտիվների կամ ամրացված գույքի գծով երրորդ անձանց երկարաժամկետ վարձակալության կամ այլ ձեւով երկարաժամկետ օգտագործման իրավունքի փոխանցման պարտավորության ընդունումը:

Անհրաժեշտ է բացահայտել վերոհիշյալ պարտավորությունների խմբին դասվող առավել խոշորները, որոնց մեծությունը գերազանցում է պետական կազմակեպության տարեկան եկամուտների 5 տոկոսը:

Այդպիսի պարտավորությունների գծով պետք է բացահայտվեն պարտավորության ընդգրկման ժամանակահատվածը եւ մեծությունը:

Ներկայացվում է տեղեկատվություն պետական կազմակեպության ֆորվարդային պարտավորությունների մեծության եւ ուղությունների հետ կապված օրանդրական կամ այլ բնույթի սահմանափակումների վերաբերյալ:

Պետական կազմակեպության ֆորվարդային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվում է սույն օրինակելի ձեւի Հավելված 1.1-ի աղյուսակ N 1.10–ի տեսքով:

1.12 Տարածաշրջանային պետական քոլեջի միջնաժամկետ ծրագրի իրականացման հետ կապված ռիսկերը

Ներկայացվում է պետական կազմակեպության միջնաժամկետ նպատակային ցուցանիշների ձեռք բերման հետ կապված բոլոր ռիսկերի վերլուծությունը:

Ռիսկերի վերլուծությունը պետք է պարունակի հնարավոր ռիսկերի նկարագրությունը, դրանց հանդես գալու հավանականությունը, վերջիններիս հնարավոր ազդեցությունները պետական կազմակեպության արդյունքային ցուցանիշների վրա (ֆինանսական եւ ոչ ֆինանսական), ինչպես նաեւ այդ ռիսկերի կանխմանը (հաղթահարմանը) ուղղված՝ պետական կազմակեպության կողմից ձեռնարկվելիք (ձեռնարկված) միջոցառումները:

Պետական կազմակեպության ռիսկերի վերլուծությունը եւ դրանց հաղթահարմանն ուղղված գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է սույն օրինակելի ձեւի հավելված 1.1-ի աղյուսակ N 1.11–ի տեսքով: Աղյուսակում ռիսկերի հանդես գալու հավանականությունը ներկայացվում է 1-ից 5 բալերի տեսքով, որտեղ 1 բալը ենթադրում է երեւույթի հանդես գալու առավել բարձր հավանականություն:

ԲԱԺԻՆ 2.
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Սույն բաժնի 2.1, 2.2 եւ 2.3 կետերում ներկայացվում են պետական կազմակեպության միջինժամկետ ծրագրի առաջին տարում պետական կազմակեպության գործունեության արդյունքների վերաբերյալ մանրամասն կանխատեսումները:
Մասնավորապես, ներկայացվումն են մատուցվող ծառայությունների գծով պետական կազմակեպության առաջիկա տարվա գործունեության հիմնական ֆինանսական եւ ոչ ֆինանսական, ինչպես նաեւ այլ անհրաժշտ ցուցանիշներ եւ չափորոշիչներ:
Ընդ որում, սույն բաժնով պահանջվող տեղեկատվությունը բովանդակում է պետական կազմակեպության գործունեության տարեկան ցուցանիշներին ներկայացվող պարտադիր պահանջները, սակայն պետական կազմակեպություններն, ըստ հայեցողության, կարող են ի լրումն վերոհիշյալ տեղեկատվության իրենց գործունեության ծրագրերում ներառել նաեւ պետական կազմակեպության գործունեությանը վերաբերող ցանկացած այլ տեղեկատվություն եւ մանրամասներ:

2 .1 Տարածաշրջանային պետական քոլեջի արդյունքային (կատարողական) չափորոշիչները

Ներկայացվում է պետական կազմակեպության գործունեության ծրագրի առաջին ֆինանսական տարում պետական կազմակեպության կողմից ձեռք բերվելիք ոչ ֆինանսական (արդյունքային) չափորոշիչների մանրամասն նկարագրությունը:
Մասնավորապես, ներկայացվում են առաջիկա տարում պետական կազմակեպության կողմից մատուցվելիք բոլոր ծառայությունների եւ դրանց գծով շահառուների նկարագիրը եւ այդ ծառայություններից յուրաքանչյուրի գծով արդյունքային ցուցանիշների կանխատեսումները: Նշված տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփել սույն օրինակելի ձեւի հավելված 1.2-ի աղյուսակներ N 2.1–ի եւ 2.2-ի տեսքով:
Վերոհիշյալ ցուցանիշների ձեւավորման համար որպես հիմք պետք է ծառայեն պետական կազմակեպության բյուջետային պատվերհիամաձայնագրերը:
Եթե պետական կազմակեպությունը որեւէ ծառայություն մատուցում է պետական պատվերի շրջանակներում, ապա այդ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը տարեկան ծրագրում ներկայացվում է առանձնացվածձեւով: Ընդ որում, այդ ծառայությունների գծով սպասվող արդյուքների նկարագրությունը պետք է համահունչ լինի բյուջետային փաստաթղթերում (հետեւաբար նաեւ Տարածաշրջանային պետական քոլեջի բյուջետային պատվերի համաձայնագրերում) սահմանված համապատասխան ցուցանիշներին:

2.2 Տարածաշրջանային պետական քոլեջի ընդհանուր ֆինանսական ցուցանիշները

Ներկայացվում են կանխատեսումներ պետական կազմակեպության գործունեության ծրագրի առաջին ֆինանսական տարում պետական կազմակեպության ընդհանուր ֆինանսական ցուցանիշների վրաբերյալ, հետեւյալ կառուցվածքով՝

1) պետական կազմակեպության կանխատեսվող ֆինանսական արդյունքները՝ սույն օրինակելի ձեւի հավելված 1.2-ի աղյուսակ 2.3-ին համապատասխան,
2) պետական կազմակեպության կանխատեսվող ֆինանսական դիրքը՝ սույն օրինակելի ձեւի հավելված 1.2-ի աղյուսակ 2.4-ին համապատասխան,
3) պետական կազմակեպության կանխատեսվող դրամական հոսքերը՝ սույն օրինակելի ձեւի հավելված 1.2-ի աղյուսակ 2.5-ին համապատասխան:

2.3 Տարածաշրջանային պետական քոլեջի տարեկան գործունեության ֆինանսական կանխատեսումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունները

Ներկայացվում են այն բոլոր հիմնական ենթադրությունները, որոնք ընկած են պետական կազմակեպության գործունեության ծրագրի առաջին տարվա համար ներկայացված մանրամասն ֆինանսական կանխատեսումների հիմքերում:

2.4 Այլ չափորոշիչներ

Պետական կազմակեպության հայեցողությամբ՝ ներկայացվում են ցանկացած այլ չափորոշիչներ, որոնք անհրաժեշտ են առաջիկա ֆինանսական տարվա ավարտին պետական կազմակեպության տարեկան արդյունքները գնահատելու համար:

Հավելված N 1.1

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԸ

Աղյուսակ N 1.1 Տարածաշրջանային պետական քոլեջի նպատակները եւ դրանց իրագործման համար Տարածաշրջանային պետական քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների ամփոփ նկարագրությունը

N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Նպատակը որի իրագործմանը նպաստում է տվյալ ծառայությունը
1.			
2.			
...			

Աղյուսակ N 1.2 Տարածաշրջանային պետական քոլեջի միջնաժամկետ արդյունքային (կատարողական) ցուցանիշները եւ դրանց ձեռք բերման կարողությունների գնահատականը

N	Ծառայության անվանումը եւ նկարագրությունը	Արդյունքային ցուցանիշները					Տարածաշրջանային պետական քոլեջի առկա կարողություն-ները	Պահանջվող լրացուցիչ կարողությունները եւ դրանց հիմնավորումը		Կարողությունների մեծացման աղբյուրները եվ ֆինանսական գնահատականը
		Չափորոշիչը	Չափորոշիչի նկարագրությունը	I տարի	II տարի	III տարի		Մարդկային կապիտալ	Ֆիզիկական կարողություններ	
1.		Քնականական								
		Որակական								
		Ժամկետայնության								
		Միավորի գինը	X							
2.		Քնականական								
		Որակական								
		Ժամկետայնության								
		Միավորի գինը	X							
...										

Աղյուսակ N 1.3 Տարածաշրջանային պետական քոլեջի հիմնական ֆինանսական ցուցանիշների կանխատեսումները միջնաժամկետ հատվածում

(Հազ.դրամ)

Տարածաշրջանային պետական քոլեջի հիմնական ֆինանսական ցուցանիշները	I տարի	II տարի	III տարի
Բաժին 1 **Տարածաշրջանային պետական քոլեջի ֆինանսական արդյունքները միջնաժամկետ հատվածում**			
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ, այդ թվում՝			
Պետական բյուջեից, այդ թվում՝			
….			
Համայնքային բյուջեներից, այդ թվում՝			
….			
Այլ պետական կազմակերպություններից, այդ թվում՝			
….			
Այլ աղբյուրներից, այդ թվում՝			
….			
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք			
Վարչական ծախսեր, այդ թվում՝			
Աշխատավարձ			
Կապ եւ էլեկտրաէներգիա			
Այլ եկամուտներ			
Այլ ծախսեր			
Զուտ շահույթ (վնաս) մինչ հարկումը			
Շահութահարկի գծով ծախսեր			
Զուտ շահույթ(վնաս) հարկումից հետո			
Բաժին 2 **Տարածաշրջանային պետական քոլեջի ֆինանսական դիրքը միջնաժակետ հատվածում**			

Ընդամենը ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Բաժին 3 **Տարածաշրջանային պետական քոլեջի դրամական միջոցների հոսքերը միջնաժամկետ հատվածում**			
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Դրամական միջոցների մուտքեր գործառնական գործունեությունից, այդ թվում՝			
Պետական բյուջեից			
Համայնքային բյուջեներից			
Այլ պետական կազմակերպություններից			
Այլ աղբյուրներից			
Դրամական միջոցների ելքեր գործառնական գործունեությունից, այդ թվում՝			
Պետական բյուջեի գծով			
Համայնքային բյուջեների գծով			
Այլ պետական կազմակերպությունների գծով			
Այլ ուղղություններով			
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Դրամական միջոցների մուտքեր ներդրումային գործունեությունից, այդ թվում՝			
Պետական բյուջեից			
Համայնքային բյուջեներից			
Այլ պետական կազմակերպություններից			
Այլ աղբյուրներից			
Դրամական միջոցների ելքեր ներդրումային գործունեությունից, այդ թվում՝			

Պետական բյուջեի գծով			
Համայնքային բյուջեների գծով			
Այլ պետական կազմակերպությունների գծով			
Այլ ուղղություններով			
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Դրամական միջոցների մուտքեր ֆինանսական գործունեությունից, այդ թվում՝			
Պետական բյուջեից			
Համայնքային բյուջեներից			
Այլ պետական կազմակերպություններից			
Այլ աղբյուրներից			
Դրամական միջոցների ելքեր ֆինանսական գործունեությունից, այդ թվում՝			
Պետական բյուջեի գծով			
Համայնքային բյուջեների գծով			
Այլ պետական կազմակերպությունների գծով			
Այլ ուղղություններով			
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր			
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը			
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի ավարտին			
Դրամական միջոցների միջին մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի համար			

Աղյուսակ 1.4 Տարածաշրջանային պետական քոլեջի շահույթի օգտագործման ծրագիրը միջնաժամկետ հատվածում

Տարածաշրջանային պետական քոլեջի շահույթի օգտագործման ուղղությունները	I տարի (Հազ.դրամ)	II տարի (Հազ.դրամ)	III տարի (Հազ.դրամ)	Լրացուցիչ ծառայություններ (քանակի, որակի, ժամկետայնության եւ միավորի գնի փոփոխություն)	Ազդեցությունը Կարողությունների վրա	
					Մարդկային կապիտալ	Ֆիզիկական կարողություններ
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը				X	X	X
Շահութահարկի գծով ծախսեր				X	X	X
Զուտ շահույթը (վնասը) հարկումից հետո, այդ թվում՝				X	X	X
Շահույթի վերադարձ պետական բյուջե				X	X	X
Շահույթի օգտագործման այլ ուղղություններ, այդ թվում՝						
…						

Աղյուսակ N 1.5 Տարածաշրջանային պետական քոլեջի աշխատողների վարձատրության քաղաքականությունը միջնաժամկետ հատվածում

N	Պաշտոնը	I տարի		II տարի		III տարի		Ազդեցությունը Տարածաշրջանային պետական քոլեջի կարողությունների վրա
		Միջին ցուցակային թվաքանակը	Միջին վարձատրության չափը (հազ.դր.)	Միջին ցուցակային թվաքանակը	Միջին վարձատրության չափը (հազ.դր.)	Միջին ցուցակային թվաքանակը	Միջին վարձատրության չափը (հազ.դր.)	
1	Վարչակառավարչական անձնակազմ							
2	Մասնագետներ							
3.	Այլ աշխատողներ							

Աղյուսակ N 1.6 Տարածաշրջանային պետական քոլեջի ապառքների կանխատեսումները միջնաժամկետ հատվածում

N	Ապառքները եւ դրանց ժամկետայնությունը	Ապառքների աղբյուրները	Ապառքների մեծությունը (հազ, դրամ)					
			I տարի		II տարի		III տարի	
			Ընդամենը	Այդ թվում՝ 30 օրից ավելի ժամկետով	Ընդամենը	Այդ թվում՝ 30 օրից ավելի ժամկետով	Ընդամենը	Այդ թվում՝ 30 օրից ավելի ժամկետով
	Ընդամենը ապառքներ, թվում՝							
1								
2								
..								

Աղյուսակ N 1.7 Տարածաշրջանային պետական քոլեջի կրեդիտորական եւ դեբիտորական պարտքերի կանխատեսումները միջնաժամկետ հատվածում

N	Դեբիտորական եւ կրեդիտորական պարտքերը	Պարտքերի աղբյուրները	Պարտքերի մեծությունը (հազ, դրամ)		
			I տարի	II տարի	III տարի
1	Դեբիտորական պարտքեր	Առեւտրային գործունեությունից			
		Պետական բյուջեի գծով			
		Համայնքային բյուջեների գծով			
		Այլ պարտավորություններ			
		Ընդամենը			
2	Կդեբիտորական պարտքեր	Առեւտրային կրեդիտորական պարտավորություններ			
		Պետական բյուջեի նկատմամբ			
		Համայնքային բյուջեների նկատմամբ			
		Սոցապ վճարումների գծով			
		Աշխատավարձի գծով			

		Այլ պարտավորություններ			

Աղյուսակ 1.8 Տարածաշրջանային պետական քոլեջի կապիտալ միջոցառումները միջնաժամկետ հատվածում

	Կապիտալ միջոցառումների նկարագրությունը	Ներդրումների աղբյուրները	I տարի (հազ.դր.)	II տարի (հազ.դր.)	III տարի (հազ. դր.)	Լրացուցիչ ծառայություններ (քանակի, որակի, ժամկետայնության եւ միավորի գնի փոփոխություն)	Ազդեցությունը Կարողությունների վրա	
							Մարդկային կապիտալ	Ֆիզիկական կարողություններ
1								
2								
…								

Աղյուսակ N 1.9 Տարածաշրջանային պետական քոլեջին ամրացված ակտիվների գծով կանխատեսումները միջնաժամկետ հատվածում

Տարածաշրջանային պետական քոլեջին ամրացված ակտիվները	I տարի	II տարի	III տարի	Լրացուցիչ Ծառայություններ (քանակի, որակի, ժամկետայնության եւ միավորի գնի փոփոխություն)	Ազդեցությունը Կարողությունների վրա	
					Մարդկային կապիտալ	Ֆիզիկական կարողություններ
Տարածաշրջանային պետական քոլեջին ամրացված հողամասերի մակերեսը (քմ)՝	X	X	X	X	X	X
Ընդամենը, որից՝						
Վարձակալության հանձնված հողամասերի մակերեսը						
Տարածաշրջանային պետական քոլեջին ամրացված շենք-շինությունների տարածքի չափը (քմ)՝	X	X	X	X	X	X
Ընդամենը, որից՝						
Վարձակալության հանձնված տարածքի մակերեսը						
Տարածաշրջանային պետական քոլեջի						

կողմից փաստացի օգտագործվող տարածքի մակերեսը						

Աղյուսակ N 1.10 Տարածաշրջանային պետական քոլեջի ֆորվարդային պարտավորությունների կանխատեսումները միջնաժամկետ հատվածում

N	Ֆորվարդային պարտավորությունները եւ դրանց ժամկետայնությունը	Պարտավորությունների աղբյուրները	Պարտավորության մեծությունը (հազ, դրամ)		
			I տարի	II տարի	III տարի
	Ընդամենը ֆորվարդային պարտավորություններ, այդ թվում՝				
1					
2					
…					

Աղյուսակ N 1.11 Տարածաշրջանային պետական քոլեջի միջնաժամկետ արդյունքային ցուցանիշների ձեռք բերման հետ կապված ռիսկերի վերլուծությունը

N	Ռիսկերի նկարագրությունը	Երեւույթի հանդես գալու հավանականությունը	Հնարավոր ազդեցությունը արդյունքային ցուցանիշների (ֆինանսական եւ ոչ ֆինանսական) վրա	Տարածաշրջանային պետական քոլեջի կողմից ձեռնարկվելիք (ձեռնարկված) միջոցառումները՝ ուղղված այդ ռիսկերի կանխմանը
1				
2				
…				

Հավելված N 1.2

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԸ

Աղյուսակ N 2.1 Տարածաշրջանային պետական քոլեջի նպատակները եւ դրանց իրագործման համար Տարածաշրջանային պետական քոլեջի կողմից մատուցվող ծառայությունները

N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Այլ անհրաժեշտ նշումներ
1.			
